# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*06 դեկտեմբերի 2023թվականի N 1480*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջով և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 16-ին տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023ZTZQYQ ծածկագիրը և Կարեն Ավետիսյանի 2023 թվականի մայիսի 23-ի դիմումը.

## *<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի 8 շենքի թիվ 35 բնակարանի բնակիչ Կարեն Սամվելի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 1499086, տրված՝ 2005 թվականի օգոստոսի 23-ին) Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կաքավաձոր թաղամասի 1-ին փողոց 42/1:
2.Օրինական ճանաչել Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի 8 շենքի թիվ 35 բնակարանի բնակիչ Կարեն Սամվելի Ավետիսյանի կողմից Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասի 1-ին փողոց 42/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 1499086, տրված՝ 2005 թվականի օգոստոսի 23-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 101.84քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը՝ օրինականացման վճարը սահմանել 123 200 (մեկ հարյուր քսաներեք հազար երկու հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ

900125001504 գանձապետական հաշվին:
3.Կառույց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

06 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*06 դեկտեմբերի 2023թվականի N 1481*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԹԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 10-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20233GSKPB ծածկագիրը և Գևորգ Գրիգորյանի 2023 թվականի նոյեմբերի 20-ի դիմումը.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 236 տան բնակիչ Գևորգ Սիրոյի Գրիգորյանի կողմից Հրազդան քաղաքի Շահումյան փողոց 236 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 1175782, տրված՝ 2005 թվականի օգոստոսի 22-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 92.33քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ օրինականացման վճարը սահմանել 154 500 (մեկ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) դրամ, 53.09քմ արտաքին մակերեսով անասնաշենքը՝ օրինականացման վճարը սահմանել 88 900 (ութսունութ հազար ինը հարյուր) դրամ, 1.99քմ մակերեսով հարթակը՝ օրինականացման վճարը սահմանել 3 400 (երեք հազար չորս հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին: 2.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

06 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 դեկտեմբերի 2023թվականի N 1482*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Սամվել Բարբարյանի 2023 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 76 բնակարանի բնակիչ Սամվել Բարբարյանին պատկանող /այգեգործի անդամատոմս N 120, տրված՝ 1985 թվականի ապրիլի 11-ին/ Հրազդան քաղաքի Աղբյուրակ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 9-րդ փողոց 21:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*07 դեկտեմբերի 2023թվականի N 1483*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արթուր Խաչատրյանի լիազորված անձ Նիկողոս Խաչատրյանի 2023 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 8-րդ շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Արթուր Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող / սեփականության իրավունքի գրանցման վկայական 1935606, տրված՝ 2004 թվականի դեկտեմբերի 17-ին / Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Կարմրասարի փողոց 12/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 դեկտեմբերի 2023թվականի N 1484*

ԱՆԱՍՆԱԳՈՄԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ռուդիկ Օսիպովի 2023 թվականի նոյեմբերի 14-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Երևան քաղաքի Զ. Քանաքեռցու փողոց 128Բ շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Ռուդիկ Օսիպովին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 501187, տրված՝ 2002 թվականի հուլիսի 29-ին/ Հրազդան քաղաքում գտնվող անասնագոմին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Երևան-Սևան մայրուղի, 45-46կմ 6/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 դեկտեմբերի 2023թվականի N 1485*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2023 թվականի ապրիլի 7-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023HXZZCM ծածկագիրը և Գայանե Սարգսյանի 2023 թվականի ապրիլի 10-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 70 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Գայանե Գուրգենի Սարգսյանի կողմից Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 46 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 18112014-07-0059, տրված՝ 2014 թվականի նոյեմբերի 18-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 116.75քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը՝ օրինականացման վճարը սահմանել 541 000 (հինգ հարյուր քառասունմեկ հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

07 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 դեկտեմբերի 2023թվականի N 1486*

### ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 60 շենքի 19 բնակարանի բնակիչ Միեր Հարությունյանի 2023թ. դեկտեմբերի 5-ի N 10142 դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 60 շենքի 19 բնակարանի բնակիչ Միեր Հարությունյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

07 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1487*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 3 /երեք / հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք / հատ,
3)սեղմված բնական գազի վաճառքի՝ 1 /մեկ/ հատ,
4)ժամը 24-00-ից հետո աշխատանքի՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. դեկտեմբեր 08 -ի
N 1487 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Արևիկ Կարապետյան » | Ք. Հրազդան, Ջրառատ թ-ս տուն 448 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 55 հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Արևիկ Կարապետյան » | Ք. Հրազդան, Ջրառատ թ-ս տուն 448 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 55 հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Սերյոժա Միքայելյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31/18 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 31 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Սերյոժա Միքայելյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31/18 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 31 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | | |
| 5. | Ա/Ձ «Հովիկ Մարգարյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 43/80 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, շենք43 հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Հովիկ Մարգարյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 43/80 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, շենք43 հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 7. | «Լարգո Վինչ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների 58 | Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների 58 | սեղմված բնական գազի վաճառք | լցակայան՝ հիմնական շինություն | 2023 թվականի տարվա համար |
| 8. | «Լարգո Վինչ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների 58 | Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների 58 | Ժամը 24-00-ից հետո աշխատանք | լցակայան՝ հիմնական շինություն | 2023 թվականի տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1488*

ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Ադելաիդա Թադևոսյանի 2023 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001322 հաշվեհամարին 2015-2022 թվականներին որպես կառուցապատման վճար սխալմամբ վճարված՝ տարեկան 5000 /հինգ հազար/ դրամ՝ ընդհանուր՝ 40000 /քառասուն հազար/ դրամ գումարը հետ վերադարձնել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20/11 բնակարանի բնակչուհի՝ Ադելաիդա Վազգենի Թադևոսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1489*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Մ. Մեծարենցի փողոց 10/6 հասցեում գտնվող 66.9քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1490*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 225.0քմ մակերեսով 07-001-0109-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 120:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1491*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով,Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 234.0քմ մակերեսով 07-001-0109-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 118:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 դեկտեմբերի 2023թվականի N 1492*

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Համբարձում Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 4-րդ փողոցի թիվ 34 տան բնակիչ Համբարձում Վարդանյանին ժառանգության իրավունքով փոխանցված / ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 11-ին, տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 3765, ժառանգական գործ N 137 / Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցի 5-րդ շենքի 1-ին հարկում գտնվող ոչ բնակելի տարածքին (ծածկագիր՝ 07-001-0656-0028) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց, 5 շենք 47:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1493*

### ՎԱՐԴԱՆ ՌԱԴԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Կարապետյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 29 շենքի հարևանությամբ, Սևան քաղաքի Խաչերի փողոց 10 տան բնակիչ Վարդան Ռադիկի Բաղդասարյանը, իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով «սիգ» ձկնատեսակ, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Վարդան Ռադիկի Բաղդասարյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Վարդան Բաղդասարյանը հայտնել է, որ այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար, զղջում է կատարած իրավախախտման համար և նշել, որ այլևս չի զբաղվի ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է վերջինս, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն: Վարդան Բաղդասարյանը վարչական վարույթի

լսումների ժամանակ հայտնել է իր անկեղծ զղջումը կատարած իրավախախտման վերաբերյալ: Միաժամանակ իրավախախտում կատարած անձին հորդորվել է զերծ մնալ ոչ սահմանված վայրում առևտուր իրականացնելուց և նախազգուշացվել՝ իրավախախտումը կրկնվելու դեպքում վարչական մարմինը ձեռնամուխ է լինելու վարչական ներգործության այլ միջոցներ կիրառելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 76 արձանագրությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վարդան Ռադիկի Բաղդասարյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Ռադիկի Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1494*

### ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Կարապետյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս, ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 32 շենքի հարևանությամբ, Իջևան համայնքի Այգեհովիտ բնակավայրի 22 փողոց, 6 տան բնակիչ Անդրանիկ Արամի Գևորգյանը, ոչ սահմանված վայրում իրականացնում է փողոցային առևտուր՝ ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Անդրանիկ Արամի Գևորգյանը չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով, գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, որի համար պատասխանատու է Անդրանիկ Գևորգյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն: Խախտումը կրկնվելու դեպքում վարչական մարմինը

ձեռնամուխ է լինելու վարչական ներգործության այլ միջոցներ կիրառելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 78 արձանագրությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անդրանիկ Արամի Գևորգյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Արամի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1495*

### ՋԱՆԻԲԵԿ ԴԱՎԹԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ա. Սարոյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի «ՏԻՎԱ» սուպերմարկետի հարևանությամբ Սևան քաղաքի 5-րդ Միկրո թաղամասի 3 շենքի, 4 բնակարանի բնակիչ Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով «սիգ» ձկնատեսակ, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Ջանիբեկ Սիմոնյանը հայտնել է, որ այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զղջում է կատարած իրավախախտման համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, ինչպես նաև Ջանիբեկ Սիմոնյանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է վերջինս, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ

նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ: Ջանիբեկ Սիմոնյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնել է իր անկեղծ զղջումը կատարած իրավախախտման վերաբերյալ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 77 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Ջանիբեկ Դավթի Սիմոնյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջանիբեկ Դավթի Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1496*

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վարուժան Սիրունյանի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ՝*

1. Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 8-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 10 տան բնակիչ Վարուժան Սիրունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2640058, տրված՝ 2010 թվականի սեպտեմբերի 29-ին / Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 1-ին փողոց թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 8-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 10 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1497*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Մարգարիտ Միքայելյանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 43 շենքի թիվ 102 բնակարանի բնակիչ Մարգարիտ Միքայելյանին կառուցապատման իրավունքով տրամադրված /սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական 2615824, տրված՝ 2011 թվականի մայիսի 10-ին / Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 43 շենքի հարող տարածք N 22 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 45/22 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1498*

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Կարեն Մինասարյանի 2023 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 213 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Կարեն Մինասարյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2148082, տրված՝ 2006 թվականի մարտի 3-ին / Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի N 220Ա հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 220/1 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*11 դեկտեմբերի 2023թվականի N 1499*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Մյասնիկ Երեմյանի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

